



<<ԳՅՈՒՄՐՈՒ Վ.ԱԲԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ՆՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Ներդրումային ծրագրի անձնագիր

1. Ընդհանուր տեղեկատվություն Ծրագրի մասին

<<Գյուճարու Վ.Աբաջյանի անվան Ընտանեկան Բժշկության կենտրոնը>> ՓԲԸ-նը գրադեցնում է 4862.4 քառ մետր տարածք: Շենքի մակերեսը՝ 1081.8 քառ մետր, քարաշեն կառույցի մակերեսը 355.0 քառ մետր: Շենքի տեսակը – տիպային է, շինությունը միահարկ է: Բաղկացած է 6 քարաշեն մասնաշենքերից – կից քարաշեն կառույցից, որտեղ տեղակայված է ռեստոգեն կաբինետը: Շենքը գազաֆիկացված է, առկա է լոկալ ջեռուցման համակարգ:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 5400.0 հազ. դրամ:

Բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետությանը:

Ընկերության սեփական կապիտալը կազմում է 50 904.0 հազ. դրամ:

Ընտանեկան Բժշկության կենտրոնը իրականացնում է հետևյալ բժշկական ծառայությունները.

1. Ընտանեկան բժշկություն
2. Թերապևտի ընդհանուր պրակտիկա
3. Խառը ընդհանուր վիրաբուժա-վնասվածքաբանական
4. Նյարդաբանական
5. Ակնաբուժական
6. Զիթ-կոկորդ-ականջաբանական
7. Սրտաբանական
8. Ներզատաբանական
9. Հակատուբերկուլյոզային
10. Ինֆեկցիոն- Իմունոկանխարգելիչ
11. Ուռույզիական

12.Խառը ընդհանուր ստոմատոլոգիա

13.Մանկաբարձա-գինեկոլոգիական

14.Լաբորատոր-ախտորոշիչ /կլինիկական,բիոքիմիական, սերոլոգիական, /

15.Ռենտգենաբանական -Ֆյուրոգրաֆիկ

16.Ֆունկցիոնալ ախտորոշիչ/ ԷՍԳ,ուլտրաձային , սպիրոմետրիա/

17.Դժվարամատչելի դիագնոստիկա /Էխոկարդիոգրաֆիա, դոպլեր, ԷԷԳ, գաստրոսկոպիա, /

18.Ներպոլիկլինիկական դեղատուն

19. Դպրոցների բժշկական սպասարկում

Սպասարկվող ազգաբնակչության ընդհանուր թիվը - 23479 , որից մեծահասակներ - 19141, մանկական - 4338, դպրոցական աշակերտների թիվ- 1841: Սպասարկման տարացքում գործում է 6 դպրոց, 6 նախակրթարան և 1 սպորտ դպրոց: Ընկերությունը հագեցած է 72748.6 հազ. դրամին համարժեք սարքավորումներով, սակայն, առկա պայմաններում ընկերության զարգացման, շահույթի մաքսիմալացման, մրցունակության բարձրացման նկատառումներից ելնելով՝ կարևորվում է ներդրումային միջոցների հաշվին ընկերության կողմից ազգաբնակչությանը մատուցվող բժշկական ծառայությունների տեսականու ավելացումը: Այդ հնարավորությունը ընկերությունը տեսնում է նոր բժշկական ծառայության ավելացման միջոցով, որը անհրաժեշտ է և կլինի հասանելի ու մատչելի ազգաբնակչության բոլոր խավերի համար:

Ի նկատի ունենալով, որ ընկերությունը սպասարկում է մոտ 23479 բնակչություն՝ կարելի է գնահատել առկա շուկան որպես ընդգրկուն, առավել ևս, որ Գյումրի քաղաքում գործող բուժհաստատություններում շնչառական բժշկական ֆիզկուլտուրա –ի ծառայություն չի գործում, պահանջները նշված բժշկական ծառայության մասով խիստ առկա են: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Շիրակի մարզում ընդհանրապես չի գործում շնչառական ֆիզկուլտուրայի կենտրոններ: Ուստի շուկայում մրցակցային առավելություններ ապահովելու համար անհրաժեշտ է ներդնել նոր բժշկական ծառայություններ, որոնք կապահովեն տեղի պահանջները և բնակչության արտահոսք չի գրանցվի դեպի մայրաքաղաքային բժշկական հաստատություններ:

- Ծրագրի անվանումը՝ **Շնչառական ֆիզկուլտուրաի ծառայությունների մատուցում**
- Ծրագրի նպատակը և հակիրճ նկարագիրը՝

Բժշկի նշանակմամբ, հաստատված դիագնոզի համապատասխան առողջության առաջնային պահպանման ծառայությունների ընդլայնում, վճարովի բուժօժանությունների ավելացում վճարովի եկամուտի ավելացում:

Ծրագրի գրավչությունը/արդիականությունը - Արտերկրում գործող բժշկական ֆիզկուլտուրայի փորձի ներդնումը Գյումրիում:

- Ծրագրի իրականացման վայրը ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Սարուխանյան 1
- Ծրագրի իրականացման ժամանակահատվածը սկսած 2015թվականից
- Ծրագրի ընդհանուր արժեքը 10 000.0 **հազ. դրամ**
- Ներդրումների ակնկալվող ծավալը (ներառյալ ներդրումների աղբյուրը և քանակը) - 10 000.0 **հազ. դրամ**

Ներդրումային փաթեթի վերլուծություն

	Ուժեղ	Թույլ
Հնարավորություններ	<ul style="list-style-type: none"> • Նոր ծառայություն, • Շահադրդման բարձրացում, • Ծառայությունների ընդլայնում, • Շահույթի մաքսիմալացում 	<ul style="list-style-type: none"> • Պահանջարկի ավելացման արդյունքում բուժ. Անձնակազմի ոչ համապատասխանություն, վերամասնագիտացման անհրաժեշտություն, • Վերազինում անհրաժեշտ / սպորտային / գույքով
Վտանգներ	<ul style="list-style-type: none"> • Ազգաբնակչության ոչ լիարժեք տեղեկացվածություն, • Օրենսդրական փոփոխություններ. 	<ul style="list-style-type: none"> • Ազգաբնակչության կողմից ծառայության կարևորության ոչ լիարժեք տեղեկացված լինելու հանքամանք

Կատարված ներդրումային փաթեթի հետգնումը ներդրողի կողմից իրականացվելու է ներդրումային պայմանագրի համաձայն, որի համար նվազագույն ժամկետ կարող է հանդիսանալ 5-10 տարին:

Նոր ծառայությունը հնարավորություն կտա նաև թվով 4-6 նոր աշխատատեղերի ստեղծման համար:

2. **Ընդհանուր տեղեկատվություն Ծրագրի հեղինակի մասին**

Լրացման դաշտ՝ համապատասխան բովանդակությամբ

- Կազմակերպության/անձի անվանումը <<Գյումրու Վ. Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն>>ՓԲԸ
- Կազմակերպատիրավական տեսակը՝ Փակ բաժնետիրական ընկերություն
- Ոլորտը՝ Առողջապահություն

3. Արտադրանքի/ծառայության ընդհանուր նկարագիրը (շուկայի նկարագիրը)

Լրացման դաշտ՝ համապատասխան բովանդակությամբ

- Արտադրանքի/ծառայության անվանումը՝ Շնչառական ֆիզկուլտուրայի ծառայությունների մատուցում/ բժշկի նշանակմամբ, հաստատված դիագնոզի համապատասխան /
- Արտադրանքի/ծառայության մրցակցային առավելությունները (շուկայի և արտադրանքի/ծառայության առանձնահատկությունների (նորամուծություն, գրավիչ գին, յուրահատուկ առաջարկ և այլն)՝ Շնչառական ֆիզկուլտուրան նոր ոլորտ է Հայաստանի և առավելապես Գյումրի քաղաքի համար: Արտերկրի փորձի ներդրման դեպքում, այն ազգաբնակչությանը կօգնի վարելու առողջ ապրելակերպ:
- Տեղեկատվություն ապրանքի/ծառայության պատենտային պաշտպանության, լիցենզավորման և սերտիֆիկացման, ապրանքի/ծառայության յուրահատուկ կանոնակարգային պահանջների վերաբերյալ)
- Ներքին շուկայի հակիրճ բնութագիրը՝ Շուկայի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Շնչառական ֆիզկուլտուրան չգործող ոլորտ է Գյումրիում և ունի պահանջարկ
- Ներկա դիրքը շուկայում/շուկայի ակնկալվող բաժինը - 100%
- Սպառողների թիրախային խմբերը և սպառման շուկաները - 10 տարեկանից բարձր ազգաբնակչություն
- Հիմնական մրցակիցները - չկան
- Հիմնական ռազմավարական գործընկերները, այդ թվում Ծրագրի ֆինանսավորմանը մասնակցող
- Արտահանման շուկայի բնութագիրը /արտահանման ներկա/ակնկալվող ծավալները, արտահանման տեսակարար կշիռը իրացման ծավալում/- ուսումնասիրությունները ցույց

են տվել, որ արտերկրում գործում են << Շնչառական ֆիզկուլտուրայի ծառայություններ>> մատուցող առողջապահական ընկերություններ, որտեղ գործող գները բավականին թանկ են: Որակյալ և ազգաբնակչության համար հասանելի / մատչելի/ ծառայության դեպքում, ընկերությունը կարող է ակնկալել հիվանդներ, ոչ միայն Գյումրից, այլ նաև ՀՀ մյուս տարածաշրջաններից:

4. Ծրագրի ֆինանսատնտեսական ցուցանիշները

Լրացման դաշտ՝ համապատասխան բովանդակությամբ

- Ծրագրի ընդհանուր արժեքը 10 000.0 հազ. դրամ
- Կապիտալ ծախսերը /անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում 8 000.0 **հազ. դրամ**
- Սեփական ներդրվող միջոցները -
- Ներգրավված միջոցները -
- Պահանջվող ներդրումները 10 000.0 հազ. դրամ
- Ծրագրի ետզնման ժամկետը – 5 տարի
- Զուտ դիսկոնտավորված եկամուտը
- Եկամտաբերության ինդեքսը
- Ներդրումների դիսկոնտավորված եկամտաբերության ինդեքսը
- Հիմնական ռիսկերը և ռիսկերի կանքարգելմանն ու նվազմանն ուղղված միջոցառումները
- Տեղեկատվություն հարկային արտոնությունների մասին վերջին 5 տարվա ընթացքում - հարկային արտոնություններ ընկերությունը չի ունեցել

5. Առաջարկ ներդրողին

Լրացման դաշտ՝ համապատասխան բովանդակությամբ

- Ներդրումների պահանջվող ծավալը- 10 000.0 հազ. դրամ
- Ներդրողի մասնակցության ձևը -
Կորորոշվի փոխադարձ համաձայնությամբ երկկողմանի քննարկումների արդյունքում՝ հաշվի առնելով ներդրողի շահերը:

- Երաշխավորված շահույթը - 1000.0 հազ. դրամ
Ներդրումների վերադարձի/ետզնման երաշխիքները / - Ներդրումների վերադարձը կիրականացվի փոխհամաձայնեցված ժամանակացույցով 2016-2020թթ.
համապատասխան պայմանագրերի հիման վրա:

6. Տեղեկատվություն Ծրագրի անձնագրի մասին

Լրացման դաշտ՝ համապատասխան բովանդակությամբ

- Կազմման ամսաթիվը 12.06.2014թ
- Փոխարժեքը կազմման օրվա դրությամբ

7. Կոնտակտներ

Լրացման դաշտ՝ համապատասխան բովանդակությամբ

- Կոնտակտային անձի անունը/ազգանունը, պաշտոնը - Արտուշ Ասատրյան տնօրեն
- Էլ-փոստ c-familymedicine@rambler.ru
- Հեռախոս 374 312 5-65- 17
- Ֆաքս –

8. Ծրագրի անձնագիրը հրապարակելու համաձայնություն

Համաձայն եմ / Համաձայն չեմ